ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

19-ը մարտի 2018թ.
Ժամը 11[30]

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական Ս. Աբովյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բադալյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,
բացողներ՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ՋԲ վարչության ՋԲՖՇ բաժնի առաջատար ծառայող, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ա. Ստեփանյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ֆինանսական վարչության ֆինանսական հոսքերի բաժնի 1-ին կարգի մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի առաջատար ծառայող Ս. Սալայան:
բացակայում է
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Մ. Խալաթյանը:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/4» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ռ. Մարդոյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/4» ծածկագրով մրցույթի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4.Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/4» ծածկագրով մրցույթի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ռ. Մարդոյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար **«Շինարարական աշխատանքների»** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/4» ծածկագրով մրցույթին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանում	Հասցե
1	«Աննա-80» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Անդրանիկի 131/1
2	«Բաղրամյանշին» ԲԲԸ	ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Լեռնագոգ
3	«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Նուբարաշեն 11փ., 21/26
4	«Շտիգեն» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Վիկտոր Համբարձումյան 119, 23 բն
5	«Սասունասար» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Ազատության նրբ., 4-րդ շենք, 75 բն.
6	«Օպտիմում Էներջի» ՍՊԸ	ք. Երևան, Աջափնյակ, 16 թաղ., 15 շ, 92 բն.

Հանձնաժողովը որոշեց նիստի աշխատանքները շարունակել մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո՝ 30.03.2018թ., ժամը 10:30-ին:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/4» ծածկագրով բաց մրցույթի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ռ. Մարդոյան)

Ընդունել ի գիտություն, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի ՊԺԿ-ի 20.03.2018թ. N 154/ԴՎԱ հրամանով հանձնաժողովի կազմում տեղի է ունեցել փոփոխություն և ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Մ. Խալաթյանի փոխարեն որպես հանձնաժողովի գնահատող անդամ է սահմանվել ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՋԲՖԿ ծառայության պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա. Պապյանը, որը ներգրավվել է հանձնաժողովի աշխատանքներին:

*Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում **30.03.2018թ., ժամը 10:30-ին** կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց.*

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են և համապատասխանում են «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/4» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ հետևյալ դեպքերի.

- «Աննա-80» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգի հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված տուժանքի մասին համաձայնությանը կից ներկայացված վճարման պահանջագիրը չի համապատասխանում ընթացակարգի հրավերով դրա համար նախատեսված լրացման կարգին, մասնավորապես՝ սխալ է լրացված պահանջագրի 13-րդ կետով նախատեսված՝ արժույթի կոդը,

-«Բաղրամյանշին» ԲԲԸ-ի և «Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումները չեն համապատասխանում ընթացակարգի հրավերի 7.1 կետով սահմանված պահանջներին (վճարման պահանջագրում նշված գումարը պակաս է չափաբաժնի համար նախատեսված առավելագույն գնի հինգ տոկոսից),

- «Շտիգեն» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգի հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված տուժանքի մասին համաձայնությանը կից ներկայացված վճարման պահանջագիրը չի համապատասխանում ընթացակարգի հրավերով դրա համար նախատեսված լրացման կարգին, մասնավորապես՝ պահանջագրի 2-րդ կետում ամսաթիվ է նշված, բացի այդ, շահառուի կնիքի համար նախատեսված 19բ. դաշտում դրված է մասնակցի կնիքը:

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ հանձնաժողովը որոշեց մերժել «Աննա-80» ՍՊԸ-ի, Բաղրամյանշին» ԲԲԸ-ի, «Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ի և «Շտիգեն» ՍՊԸ-ի հայտերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ռ. Մարդոյան)

2.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները

Չափաբաժին N 1՝ Արևային էներգիայի ստացման համկարգերի տեղադրում.

Նախահաշվային գին՝ 4,972,720 դրամ

Հ/հ	Մասնակցի անվանում	Առաջարկած գին		
		Առանց ԱԱՀ	ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	«Աննա-80» ՍՊԸ	3,500,000	700,000	4,200,000
2	«Բաղրամյանշին» ԲԲԸ	3,818,580	763,716	4,582,296
3	«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ	3,830,000	766,000	4,596,000
4	«Շտիգեն» ՍՊԸ	2,633,680	526,740	3,160,420
5	«Սասունասար» ՍՊԸ	55,830,000	11,166,000	66,996,000
6	«Օպտիմում Էներջի» ՍՊԸ	3,076,011.18	615,202.24	3,691,213.42

Ներկայացված են ծավալաթերթով նախատեսված աշխատանքների (առանձին տողերի) համար մասնակիցների կողմից առաջարկվող միավորի գների հանրագումարի արդյունքում ստացվող թվերը:

2.2 Մասնակիցների գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/: Հանձնաժողովի կողմից մերժվել են «Աննա-80» ՍՊԸ-ի, Բաղրամյանշին» ԲԲԸ-ի, «Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ի և «Շտիգեն» ՍՊԸ-ի հայտերը:

2.3 Սույն մրցույթի շրջանակներում գների նվազեցման բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/4» ծածկագրով բաց մրցույթի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ռ. Մարդոյան)

3.1 Էլեկտրոնային գնահատման արդյունքում «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/4» ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա մրցույթում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն:

3.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/4» ծածկագրով բաց մրցույթի **հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը**:

3.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ռ. Մարդոյան)

4.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/4» ծածկագրով մրցույթի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացվելիք հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ս. Աբովյան
Գնահատող	Ա. Պապյան
Գնահատող	Հ. Բաղալյան
Գնահատող	Ա. Մաղաքյան
Գնումները համակարգող՝	Ռ. Մարդոյան

30.03.2018թ.